ԲԱԺԻՆ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 1: ТЕОРИЯ ПЕДАГОГИКИ
SECTION 1: THEORY OF PEDAGOGY

378(479.25)

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Աբրահամյան Անի
ԵՊՀ, Հայաստան

Համառոտ ներածական: Պետությունների կայուն զարգացման գործընթացում ռազմավարական նշանակություն ունի բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը, որը հասարակության ինտելեկտուալ ներուժի ու տնտեսության զարգացման հիմքն է:

Այս հոդվածում ներկայացված են Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի հիմնախնդիրները՝ հիմնված ոլորտը կարգավորող օրենսդրության վերլուծության վրա: Ուսումնասիրության ենք ենթարկել նաև ոլորտի զարգացման հեռանկարներն ու ուղղություններն ուրվագծող, օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունները, որոնք էականորեն կփոխեն բարձրագույն կրթության ոլորտը՝ կառուցվածքից մինչև կառավարում:

Բանալի բառեր: Բարձրագույն կրթություն, կրթության կառավարում, կրթության ֆինանսավորում, որակի ապահովում, կրթության եռաստիճան համակարգ, Եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ), ընդունելության համակարգ:

Հիմնախնդիրը: Հետազոտության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի հիմնախնդիրների ուսումնասիրությունն է ու դրա հիման վրա ոլորտի զարգացման հեռանկարների վերհանումը:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի, դրա կառավարման, ֆինանսավորման, բարեփոխումների և ոլորտին առնչվող խնդիրների ուսումնասիրություն իրականացրել են նաև Ա. Բուդաղյանը, Ա. Գրիգորյանը, Ն. Հարությունյանը, Յու. Սարգսյանը և այլք:

Հոդվածի նպատակը: Հետազոտության նպատակը բարձրագույն կրթության ոլորտը համակարգող օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և առկա իրավիճակի ուսումնասիրումն ու դրա հիմնա վրա ոլորտի զարգացման ուղղությունների ներկայացումն է:

Հետազոտության նորույթը: Հետազոտության մեջ ուսումնասիրվել են ինչպես բարձրագույն կրթության ոլորտը համակարգող գործող օրենքներն ու իրավական ակտերը, այնպես էլ տարիներ շարունակ քննարկումների սեղանին դրված օրենսդրական փոփոխությունները՝ օրենքի նախագծի տեսքով: Ըստ այդմ՝ վեր են հանվել զարգացման ուղղությունները, դեպի որոնք գնում է ՀՀ բարձրագույն կրթության համակարգը:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության համակարգը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին» (ընդունված՝ 14.04.1999թ.)

և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (ընդունված՝ 14.12.2004թ.) ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի միջոցով:

Կրթության բնագավառում գործող օրենսդրության հիմնական խնդիրներն են ՀՀ քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված կրթություն ստանալու իրավունքի ապահովումն ու պաշտպանությունը, դաշտը կարգավորելու համար իրավասությունների բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, կրթության ոլորտում իրավական երաշխիքների ու մեխանիզմների ստեղծումը, իրավաբանական ու ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումն ու փոխհարաբերությունների իրավական կարգավորումը [2, հոդված 2]:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում տարվող պետական քաղաքականության հիմքում ընկած են մի շարք սկզբունքներ, որոնք ուղղված են մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովմանն ու պաշտպանությանը, կրթության մատչելիությանը, կրթական գործընթացի անընդհատությանը, հաջորդականությանը և շարունակականությանը, մրցութայնությանը, թափանցիկությանն ու հրապարակայնությանը, եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությանը և դիպլոմների, դրանց ներդիրների ճանաչելիությունն ապահովելուն, ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելուն, բուհերի ակադեմիական ազատությունների և ինքավարության խթանմանն ու զարգացմանը, հայկական սփյուռքի համար, ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագետների պատրաստմանն ու որակավորումների բարձրացմանը [1, հոդված 4]:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքում ընկած են նաև խնդիրներ, որոնք ուղղված են կրթության որակի ապահովմանը, պետության համար առաջնային դեր ունեցող բնագավառներում որակյալ մասնագետների պատրաստմանն աջակցելուն, միջազգային համագործակցության զարգացմանը, մրցունակության բարձրացմանը, միջազգային չափանիշների ներդրմանը և հավատարմագրված բուհերի իրավահավասարության ապահովմանը՝ անկախ բուհի սեփականության ձևից [1, հոդված 5]:

Եվ չնայած նրան, որ մշտապես խոսվում է բուհերի ինքնավարության ու ակադեմիական ազատությունների մասին, ՀՀ օրենսդրությամբ կարգավորվում են բուհերի գործունեության գրեթե բոլոր դաշտերը, ինչը վկայում է այն մասին, որ մեր կրթության համակարգի ինքնավարությունը կարելի է չափել օրինակ Ջոն Ֆիլդենի «Միջազգային տենդենցները համալսարանական կառավարման մեջ» աշխատության մեջ առաջարկվող կրթության կառավարման մոդելներով և, ըստ այդմ, Հայաստանի բարձրագույն կրթության կառավարման մոդելը համապատասխանում է կիսաինքնավարության մոդելին, որը ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1:

Չորս մոդելներ. վերահսկողությունից մինչև ինքնավարություն [7, էջ 9]

ԲՈՒՀԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼ	ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ	ՕՐԻՆԱԿՆԵՐ
Պետական վերահսկողությամբ	Կարող է լինել ԿԳՆ ենթակա հիմնարկ կամ պետական սեփականություն հանդիսացող կորպորացիա:	Մալայզիա

Կիսաինքնավար	Կարող է լինել ԿԳՆ ենթակա հիմնարկ կամ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություն, կամ որևէ այլ կանոնադրական մարմին:	Նոր Զելանդիա, Ֆրանսիա
Կիսաանկախ	Կանոնադրական մարմին, եկամուտ չհետապնդող կամ բարեգործական կազմակերպություն՝ ԿԳՆ իրավասության տակ:	Սինգապուր
Անկախ	Կանոնադրական մարմին, եկամուտ չհետապնդող կամ բարեգործական կազմակերպություն՝ առանց պետության մասնակցության ու վերահսկողության, պատասխանատու է ազգային ռազմավարության և հանրային ֆինանսավորման տեսանկյունից:	Ավստրալիա, Միացյալ Թագավորություն

ՀՀ տարածքում գործում են շուրջ 50 բուհեր, որոնց թվում՝ պետական, մասնավոր և միջպետական բուհեր, ինչպես նաև օտարերկրյա բուհերի մասնաճյուղեր: Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հիմնադրամներ կամ ՊՈԱԿ-ներ են, որոնք, ՀՀ-ում գործող օրենքներին ու իրավական ակտերին համապատասխան, ձեռք են բերում իրենց խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ ու պարտականություններ, բայց սրան զուգահեռ, օրենքը չի սահմանափակում մասնավոր բուհերի իրավական կարգավիճակի հարցը:

Բարձրագույն կրթության համակարգում կարևոր դեր ունի բուհերի ընդունելության համակարգը: Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի համաձայն: Յուրաքանչյուր բուհի գործունեության առանցքային ցուցանիշները (ԳԱՑ) չափելիս ու գնահատելիս դիտարկվում է նաև ուսանողական կազմը: Բուհի համար որակյալ կադր պատրաստելը գերխնդիր է, սակայն պետական բուհերը զրկված են ուսանողների ընդունելությունը կազմակերպելու հնարավորությունից, ուստի զրկված են կադրերն ընտրելու հնարավորությունից: Հայաստանում գործող միասնական ընդունելության քննությունների արդյունքներով բավարար միավորներ ստացած դիմորդներն ընդունվում են իրենց հայտերում նշված բուհեր, եթե հավաքել են դրանց համար անհրաժեշտ միավորները: Այսօր Հայաստանում տիրող իրավիճակը կրթության ոլորտը հետազոտողների ու շահառուների համար մտահոգիչ է այնքանով, որ պետական նվազ ֆինանսավորման պատճառով բուհերն իրենց կարիքները հոգալու ու բնականոն գործունեությունը շարունակելու համար իրենց բյուջեն հիմնականում ձևավորում են վարձավճարներով, ինչը թույլ չի տալիս բարձրացնել ընդունելության պահանջները՝ համապատասխանաբար ապահովելով ավելի որակյալ կրթություն:

Ընդունելության քննությունները ՀՀ-ում միասնական, կենտրոնացված, ներբուհական և Արարատյան բակալավրիատի քննություններն են, որոնք կազմակերպում և անցկացնում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպությունը, իսկ Արարատյան բակալավրիատի քննությունները կազմակերպում և անցկացնում է «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ներդրման և իրականացման համար պատասխանատու կազմակերպությունը՝ «Այբ» կրթական հիմնադրամը՝ Գնահատման և թեստավորման կենտրոնի հետ համատեղ [4, կետ 6]:

Հայաստանում բարձրագույն կրթության առաջին աստիճանը՝ բակալավրն է (բակալավրի որակավորմամբ), երկրորդը՝ մագիստրատուրան (մագիստրոսի որակավորմամբ), իսկ ասպիրանտուրան (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան) և դոկտորանտուրան (գիտությունների դոկտորի գիտական աստիճան) հետբուհական կրթության բաղկացուցիչ մաս են: Վերոնշյալ դրույթը, որպես օրենսդրական փոփոխություն նախատեսվում է իրականացնել օրենքի նախագծի շրջանակում և անցում կատարել եռաստիճան կրթական համակարգի, որտեղ մասնագիտության դոկտորը կլինի կրթության երրորդ աստիճանը, այս կերպ կյանքի կկոչվի Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղություններից ևս մեկը:

Բուհերում կառավարումն իրականանում է միանձնյա և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ՝ կառավարման մարմինների միջոցով: Բուհերի կառավարման մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը կամ խորհուրդը, բուհի գիտական խորհուրդը և գործադիր մարմինը՝ ի դեմս ռեկտորի: Բուհի կառավարման կոլեգիալ մարմնում ներկայացուցիչներ կան բուհի պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, հիմնադրից և պետական կառավարման լիազոր մարմնից՝ 25% համամասնությամբ: Ակնհայտ է, որ բուհերում պետության միջամտությունը շատ բարձր է, քանի որ կառավարման մարմիններիում 50 % ներգրավվածություն ունեն, ինչը վկայում բուհերում պետության ունեցած վերահսկողության մասին: Այս հարցին անդրադառնում է նաև «ATHENA» («Եվրոպական հարևանության տարածաշրջանի բարձրագույն կրթական հաստատությունների ինքնավարության և կայունության խթանում») նախագիծը, որտեղ առաջարկվող գործողությունների քարտեզում խորհուրդների անկախացման համատեքստում առաջարկվում է վերանայել կազմը: Այս հարցը կարևոր փոփոխություններից է, որը տեղ է գտել նաև շրջանառվող օրենքի նախագծում, որտեղ խորհուրդների կազմի մասով առաջարկվող մոդել էր օրինակ հետևյալը՝ պրոֆեսորադասախոսական կազմ՝ 30 %, հիմնադրի և լիազոր մարմին ներկայացուցիչներ՝ 30 %, գործատուներ՝ 30 %, ուսանողության ներկայացուցիչներ 10 %: Սակայն սա ևս չի լուծում ինքնավարության խնդիրը, քանի որ և՛ գործատուների, և՛ հիմնադրի ու լիազորված մարմնի ներկայացուցիչները (կազմի 60 %-ը) պիտի ներկայացվեն կառավարության կողմից:

Բարձրագույն կրթության համակարգի, դրա կառավարման համակարգային և ինստիտուցիոնալ մոտեցումների մասին պատկերն արդեն հստակ է, սակայն ցանկացած ոլորտի կառավարման մեջ մեծ կարևորություն ունի ֆինանսավորումը, ինչը բոլոր սահմանված խնդիրների լուծման երաշխավորն է:

1988 թվականին Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո կրթության վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը կտրուկ անկում ապրեց սակայն, նույնիսկ այդ դժվար ժամանակաշրջանում կրթության ոլորտը չտուժեց ֆինանսավորման պակասից: 1990 թվականին բարձրագույն կրթության վրա կատարված պետական ծախսերը կազմում էին պետբյուջեի մոտ 4 %-ը և ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) 1.5 %-ը [6, էջ 101]:

Խորհրդային Միության փլուզումից հետո տնտեսության բոլոր ճյուղերն անմիջապես հայտնվեցին խորը ճգնաժամում: Դրան հաջորդեց Հայաստանի անկախացումը,

բայց այդ ժամանակաշրջանը Հայաստանի համար պատերազմական էր: Կրթության ոլորտին հատկացվող պետական միջոցները անկախությունից հետո 2000 թվականի կեսերից միայն սկսեցին աճել մինչև 2009 թվականի համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որից անմասն չմնաց նաև Հայաստանի տնտեսությունը: Կրթության բոլոր մակարդակների գծով ծախսերը կազմում են ՀՆԱ 3,0 %-ը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) երկրների միջին ցուցանիշի մոտ կեսը: Բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերը կազմում են ՀՆԱ 0,9 %-ը, իսկ ՏՀԶԿ երկրներում՝ 1,5 %-ը: Հայաստանում բարձրագույն կրթությանն ուղղվող պետական միջոցները ՀՆԱ 0,3 %-ին չեն հասնում, որը էապես զիջում է ՏՀԶԿ-ի միջին 1,0 %-ին: Կրթության ոլորտին ուղղվող մասնավոր միջոցների մեջ մեծամասնություն են կազմում ուսման վարձավճարները, ինչը չափազանց բարձր է միջազգային ցուցանիշների համեմատ, բայց նույնիսկ այս դեպքում այդ միջոցները բավարար չեն ոլորտի շարունակաբար ֆինանսավորելուն: Ավելին, գիտության զարգացմանն ուղղված սահմանափակ պետական ֆինանսավորումը (ՀՆԱ 0.2 %-ը) հիմնականում հատկացվում է Գիտությունների ազգային ակադեմիային՝ սահմանափակելով համալսարանների գիտահետազոտական կարողությունները [5, էջ 4-5]:

«ATHENA» նախագծի շրջանակում ուսումնասիրված ֆինանսական ինքնավարության տեսանկյունից Հայաստանը գտնվում է միջինից բարձր խմբում՝ 93 %, ինչը դժվար է անգամ ասել՝ դրական է, թե ոչ: Քանի որ ինքնավարության այս բարձր ցուցանիշը պայմանավորված է պետության կողմից նվազ ֆինանսավորմամբ, այսինքն՝ որքան շատ լիներ պետական ֆինանսավորումը, այդքան նվազ կլիներ բուհի ինքնավարությունը ֆինանսական տեսանկյունից: Այս համատեքստում համալսարաններին իրենց ֆինանսների կառավարման գործում միջամտելը կամ սահմանափակումներ դնելը կարող է վնասակար ազդեցություն ունենալ բուհերի համար: Ներկայումս պետական ֆինանսավորումը բուհերինետրամադրվում է ուսանողի թվով պայմանավորված բլոկային դրամաշնորհի միջոցով, որը կազմում է բուհերի բյուջեների միջինում 23 %-ը, իսկ մյուս մասը մեծ մասամբ գոյանում է ուսանողների կողմից վճարվող վարձավճարներից: Պետք է փաստել, որ այս պայմաններում բուհերում հաճախ տուժում է կրթության որակը [3, էջ 13-14]: Օրենքի նախագծով բուհերի ֆինանսավորման համակարգում նախատեսվում են փոփոխություններ, որոնք հնարավորություն կտան տարբերակելու բուհերն ըստ որակական ցուցիչների ևս: Բուհերը պետական բյուջեից կկարողանան ֆինանսավորվել նաև մրցակցային, նպատակային, ուսանողական ֆինանսական խրախուսման և այլ ձևերով, ինչը գործող ֆինանսավորման համակարգին կընձեռի լայն հնարավորություններ: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ խնդիրների լուծումը պայմանավորված չէ միայն ֆինանսավորման աղբյուրների ու ձևերի քանակով. կարևոր է ֆինանսավորման ծավալը, որը, ինչպես արդեն նշեցինք, ՀՀ-ում ՀՆԱ-ի քիչ տոկոսն է կազմում:

Եզրակացություններ: Բարձրագույն կրթության համակարգի օրենսդրության և առաջարկվող օրենքի նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներկայումս բարձրագույն կրթության ոլորտում նոր օրենքի նախագծով պայմանավորված զարգացման հեռանկարները ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում կփոփոխեն կառավարումը, ֆինանսավորումը, որակի ապահովման գործընթացները, կրթական աստիճանները, ուսուցման ձևերը, ուսանողական նպաստները, կրթության բովանդակությունը, և սրանք ավելի կմոտեցնեն ազգային կրթությունը ԵԲԿՏ հիմնական նպատակներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-62-Ն, 14.12.2004 թ.:
2. «Կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-297, 14.04.1999թ.:
3. Համալսարանական ինքնավարությունը Հայաստանում, ATHENA, Վերլուծություն և գործողությունների քարտեզ, Հայաստան, 2012-2015:
4. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման հավելված, Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ:
5. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրային որոշման Հավելված N 1:
6. «Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2010», Բարձրագույն կրթության մարտահրավերները:
7. John Fielden, Global Trends in University Governance, Education Working Paper Series, Number-9.

ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА

Абраамян Ани
ЕГУ, Армения

Аннотация

В процессе стабильного развития государств стратегическое значение имеет система высшего профессионального образования, являющаяся основой развития интеллектуального потенциала и экономики общества.

В данной статье представлены проблемы системы высшего профессионального образования Республики Армения, основанные на анализе регулирующего сферу законодательства. Также подверглись изучению предложенные законопроектом изменения, предопределяющие перспективы и направления развития сферы, что значительно изменит область высшего образования: от структуры до управления. Результаты проведенного анализа изложенного выше показали , что все происходящие и планируемые изменения в высшем профессиональном образовании Республики Армения направлены на полную интеграцию в Европейское пространство высшего образования.

Ключевые слова: высшее образование, управление образованием, финансирование образования, реформы, Болонский процесс, обеспечение качества, трёхступенчатая система, Европейское пространство высшего образования (ЕПВО), система приёма.

Список использованной литературы

1. Закон РА «О высшем и послевузовском профессиональном образовании», ЗР-62-N, 14.12.2004.
2. Закон РА «Об образовании», ЗР-297, 14.04.1999 г.
3. Университетская автономия в Армении, ATHENA, Анализ и Карта действий, Армения, 2012-2015 гг.
4. Порядок приема в государственные и негосударственные высшие учебные заведения Республики Армения (по образовательной программе бакалавриата), Приложение к постановлениям Правительства РА № 597-Н от 26 апреля 2012 г.
5. Стратегия финансирования высшего образования Республики Армения, Приложение 1 к протокольному решению Правительство РА № 25 от 30 июня 2011 г.
6. Отчет о национальной конкурентоспособности Армении, 2010, Проблемы высшего образования.
7. Саргсян Ю., Будагян А., Болонский процесс в Армении, Ереван, 2008.
8. Джон Филден, Глобальные тенденции в управлении университетами, Серия рабочих документов по образованию, номер 9.

PROBLEMS AND DEVELOPMENT PROSPECTS OF THE RA HIGHER EDUCATION SYSTEM

Abrahamyan Ani
YSU, Armenia

Summary

The sphere of higher professional education being the basis of the intellectual potential of the society and the development of the economy is of strategic importance in the process of sustainable development of the states.

The present article portrays the problems of the sphere of higher professional education of the Republic of Armenia, based on the analysis of the legislation regulating the sphere. We have also studied the changes (outlining the development prospects and directions of the sphere) proposed by the draft law, which will significantly change the sphere of higher education, from structure to management. From the above study, it becomes obvious that all the ongoing and planned changes in the sphere of higher professional education in the Republic of Armenia are aimed at full integration into the European Higher Education Area.

Keywords: Higher education, education management, education financing, reforms, Bologna process, quality assurance, three-tier system, European Higher Education Area (EHEA), admissions system.

References:

1. RA Law on Higher and Postgraduate Professional Education, HO-62-N, 14.12.2004.
2. RA Law on Education, HO-297, 14.04.1999.
3. University Autonomy in Armenia, ATHENA, Analysis and Action Map, Armenia, 2012-2015.
4. Annex to the Decision N 597-N of the Government of the Republic of Armenia of April 26, 2012, procedure for admission to state-non-state higher educational institutions of the Republic of Armenia (according to the bachelor's educational program).
5. Strategy for Financing Higher Education of the Republic of Armenia, Appendix 1 to the Protocol Decision of the Government of the Republic of Armenia No. 25 dated June 30, 2011.
6. National Competitiveness Report of Armenia 2010, Challenges of Higher Education.
7. John Fielden, Global Trends in University Governance, Education Working Paper Series, Number-9.

Материал был представлен и отправлен на рецензию: 20.03.2021
Принято к публикации: 03.04.2021
Рецензент: канд. пед. наук, доцент Аревик Казарян

The material was submitted and sent to review: 20.03.20201
Was accepted for publication: 03.04.2021
Reviewer: Assoc. Prof., PhD. Arevik Khazaryan

378(479.25)

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Խաչատրյան Ռոբերտ
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան
Մովսիսյան Տաթև
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայաստան

Համառոտ ներածություն: Բարձրագույն կրթության ներկայիս բարեփոխումների համատեքստում առաջնահերթություն են դառնում կրթության որակի ապահովման գործընթացները: Վերջիններս նաև պայմանավորված են ԵԲԿՏ անդամ երկրներում բարձրագույն կրթության քաղաքականությունների, ռազմավարությունների ու օրենսդրական շրջանակների բազմընտրությունների առկայությամբ, բարձրագույն կրթության վերջնարդյունքների համադրելիության անհրաժեշտությամբ, ազգային և եվրո-